ԱՐՑԱԽ ՀԷԿ

# «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա

## ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի կողմից ընդունված որոշումներ

2016 թվականի հունիսի 27-ին կայացել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:
Ստորև ներկայացվում է ժողովի կողմից ընդունված որոշումները:

Վ. Բեգլարյան Գլխավոր Տնօրեն, Տնօրենների Խորհրդի անդամ

(ստորագրություն)

05.07.2016թ.

### ««ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2016 թ. Ν 1

ք.Ստեփանակերտ

### «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժա) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի դ) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 27.06.2016թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 1-2016 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ո ր ո շ ու մ է՝

Հաստատել «Աստրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որպես 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ:

ժողովի նախագահ՝ Ս. Թևոսյան

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2016 թ. N 2

ք.Ստեփանակերտ

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժբ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի ե) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 27.06.2016թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 1-2016 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ո ր ո շ ու մ է՝

Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2015 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները:

Հաստատել զուտ շահույթի բաշխման համամասնությունները, այդ թվում՝ շահութաբաժինների մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 8 % տարեկան եկամտաբերության հաշվարկով ընդամենը 852 000 000 (ութ հարյուր հիսուներկու միլիոն) ՀՀ դրամ և մասհանումներ Գլխավոր պահուստին՝ զուտ շահույթի 5%-ի չափով 41 662 000 (քառասունմեկ միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամ:

**Ժողովի նախագահ՝ Ս. Թևոսյան**

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2016 թ. N 3

ք.Ստեփանակերտ

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժբ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի զ) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 27.06.2016թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 1-2016 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ո ր ո շ ու մ է՝

2015 թվականի արդյունքներով ընկերության բաժնետերերին վճարել շահութաբաժիններ՝ 1 բաժնետոմսին 80 (ութսուն) ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով 2016թ. հուլիսի 5-ից:

**Ժողովի նախագահ՝ Ս. Թևոսյան**

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2016 թ. N 4

**ք.Ստեփանակերտ**

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի ա) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 27.06.2016թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 1-2016 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ո ր ո շ ու մ է՝

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհուրդ ընտրել հետևյալ կազմով՝

1. Թևոսյան Սպարտակ
2. Բեգլարյան Հայկ
3. Բալյոզյան Րաֆֆի
4. Ղոնյան Արա
5. Բոյաջյան Հայկ
6. Արաքյան Կարեն
7. Բեգլարյան Վահրամ

**ժողովի նախագահ՝ Ս. Թևոսյան»**